ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	18.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/119

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Բողոքաբեր՝ «Սուարդի» ԲԸ

Մասնակցությամբ՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ս. Սարգսյանի

«Սուարդի» ԲԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«TUR-12» ծածկագրով գնման ընթացակարգ, Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սուարդի» ԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 03.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Հպաստանի տարածքային զարգացման հիմնադրամին /մրցույթի հանձնաժողովին/ ընդունել որոշում չկայացած հայտարարելու 06.07.2020թ.-ին հայտարարված հրավերով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 04.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/119 համարի ծածկագիրը:

10.12.2020թ.-ին և 18.12.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.12.2020թ.-ին:

2. «Սուարդի» ԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սուարդի» ԲԸ-ն 03.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. 06.07.2020 թվականին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կողմից www.gnumner.am կայքում թիվ TUR-12 ծածկագրով հրապարակվել է հրավեր Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնման աշխատանքների կատարման համար:

2. 10.08.2020 թվականին հրապարակված հրավերին համապատասխան «ՍՈՒԱՐԴԻ» ԲԸ-ն /այսուհետ նաև՝ Բողոքաբեր/ ներկայացրել է հայտ:

3. Համաձայն հրավերի ներկայացվող աշխատանքի արժեքը չպետք է պակաս լինի 1,232,250,000 ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիրը առնվազն 2,464,500,000 ՀՀ դրամ:

4. Հայտերի վերաբերյալ, այդ թվում՝ հայտերի բացվելու, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարվելու, ընտրված մասնակից հայտարարվելու վերաբերյալ որևէ հրապարակում կայքում առկա չէ:

5. 30.11.2020 թվականին գրություն է ուղարկվել Հիմնադրամին՝ որոշումները տրամադրելու կամ կայքում հրապարակելու վերաբերյալ, սակայն պատասխան չի ստացվել:

Գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները և ապահովվեն թափանցիկությունը, արդյունավետությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով,

առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:...»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն.

14) տեղեկագիր՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը»:

Տվյալ դեպքում վերը նշված նորմերով սահմանված է, որ հայտերի բացումից հետո հանձնաժողովը /Պատվիրատուն/ գնահատում է հայտերը սկսելով առաջին տեղ ընտրված մասնակցի ընտրությունից: Հայտերը գնահատվում են բավարար, եթե համապատասխանում է հրավերին: Սույն գործով Բողոքաբերը հրավերին համապատասխան ներկայացրել է հայտ, սակայն այլ տեղեկատվություն չի հրապարակվել: Ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պետք է անգործության ժամկետ սահմանվի ապահովելով նաև բողոքարկման պայմանները:

Հայտերի բացվելու, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարվելու, ընտրված մասնակից հայտարարվելու վերաբերյալ որևէ հրապարակում կայքում առկա չէ: Անգործության ժամկետի հաշվարկման բացակայության պայմաններում էլ ցանկացած ենթադրյալ պայմանագիրն առոչինչ է և չի կարող որևէ իրավաբանական հետևանքներ առաջացնել:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Սուարդի» ԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին /մրցույթի հանձնաժողովին/ ընդունել որոշում չկայացած հայտարարելու 06.07.2020թ.-ին հայտարարված հրավերով գնման ընթացակարգը:

Ընկերությունը 10.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից քննության է առնվում թիվ ԳԲՔԱ-ԼՕ 2020/119 բողոքը, որ քննության իրավասության վերաբերյալ ցանկանում եմ նշել, որ կիրառելի է «Գնումների մասին» ՀՀ օրենքը հետևյալ պատճառաբանությամբ.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի դ, ե ենթակետերի համաձայն. «Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) պատվիրատու՝

դ. պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններ,

ե. պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնադրամներ կամ ձևավորված միավորումներ (միություններ)»:

ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2014 թվականի N 1521-Ն որոշման հավելված 1-ի /այսուհետ կանոնադրություն/ 2-րդ, 3-րդ կետերի համաձայն. «2. Հիմնադրամն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի N 162 որոշման համաձայն, գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2000 թվականի սեպտեմբերի 13-ի N 988 հրամանով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հիմնադրամի հիմնադրի անունից որպես պետական լիազոր մարմին հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը»:

Տվյալ դեպքում ՀՀ-ում գործող օրենսդրության «Գնումների մասին» ՀՀ օրենքի իմաստով Հիմնադրամը հանդիսանում է Պատվիրատու, քանի որ այն հանդիսանում է միակ հիմնադրի ՀՀ Կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.»:

Կանոնադրության 16-րդ և 17-րդ կետի համաձայն. «16. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ իր գործունեության առարկային, նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան

17. Հիմնադրամը, որպես սեփականություն, կարող է ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամով, արտարժույթով և այլն:

18. Հիմնադրամի գույքի, այդ թվում ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ֆինանսական և նյութական ներդրումները.

2) քաղաքացիների և կազմակերպությունների բարեգործական նվիրատվություն-ները.

3) ծրագրերում ընդգրկված համայնքների դրամական ն նյութական ներդրումները.

4) տեղական և օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպությունների ֆինանսական ու նյութական ներդրումները և նվիրատվությունները»:

Տվյալ դեպքում անկախ հիմնադրամին հատկացված ֆինանսական միջոցների եղանակից, տվյալ ֆիեասնական միջոցները հանդիսանում են Հիմնադրամի գույքը, որն իր գույքի կառավարման համար պետք է ղեկավարվի ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ միցոյթների իրականացումը: Այսինքն կիրառելի է «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ):»:

Նման պայմաններում յուրաքանչյուր դեպքում երբ կիրառելի է «Գնումների մասին» ՀՀ օրենքը, ապա ՀՀ-ում յուրաքնաչուր մրցույթի Պատվիրատուի գործողությունների, որոշումների վերարերյալ կարող է և պետք է որոշում կայացնի անձը, 47-րդ հոդվածի լիազորությունների շրջանակում:

Բացի այդ հարկ եմ համարում նշել, որ հրավերով սահմանված չէ մրցույթի Պատվիրատուի գործողությունների, որոշումների բողոքարվելու իրավունքը և կարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 17-րդ ենթակետի համաձայն.

«Գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը.»:

Տվյալ դեպքում հրավերով նշված է պայմանագիր կնքելուց հետո աշխատանքների կատարման վերաբերյալ բողոքներ ներկայացնելու մասին, որը սույն բողոքի հետ կապ չունի:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ սույն բողոքը պետք է քննի և դրա վերաբերյալ որոշումն կայացնի գնումների հետ կապված բողոքներ քննող անձը:»:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18003-2020 գրությամբ դիմել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Սուարդի» ԲԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 10.12.2020թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 07.12.2020թ.-ին թիվ Ե/01/2221-20 գրությամբ ներկայացրել է «Սուարդի» ԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևան-Լանջազատ-Գառնի ճանապարհի վերականգնում, TUR-12» ազգային մրցույթը անց է կացվել Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագրի շրջանակներում, Համաշխարհային Բանկի «Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄՋՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից» հունվար 2011թ., վերանայված հուլիս 2014թ. գնումների ընթացակարգերով, ինչը ենթադրում է, որ նշված գնման գործընթացը չի կանոնակարգվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

Խնդրո առարկա մրցույթի հայտերի բացման արձանագրությունը 10.08.2020թ. ARMEPS համակարգի միջոցով ուղարկվել է մրցույթի բոլոր մասնակիցներին, իսկ պայմանագրի շնորհման մասին տեղեկատվությունը առկա է www.atdf.am և https://projects.worldbank.org/en/projects-operations/procurement-detail/OP00105453?cid_-tracking_parameter=WBW_AL_whatsnew_EN_EXT կայքերում:

Կից ներկայացնում ենք նաև 30.11.2020թ. «ՍՈՒԱՐԴԻ» բաժնետիրական ընկերության և մասնաճյուղի ներկայացուցիչ փաստաբանին ուղարկված համապատասխան գրությունը և վերոհիշյալ հայտերի բացման արձանագրությունը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/119 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնման նպատակով 06.07.2020թ.-ին հայտարարվել է «TUR-12» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 10.08.2020թ.-ին ժամը 10:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող հայտերի ներկայացման հրավերով (այսուհետ նաև՝ Հրավեր) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն

օգտագործել TUR-12, «Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնում» պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

iv. Հրավերի 3-րդ կետի համաձայն՝ Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից» հունվար 2011թ., վերանայված հուլիս 2014թ. «Գնումների ուղեցույցներ»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Սուարդի» ԲԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ և 12-րդ ենթակետերի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

10) բողոքարկման համար պատասխանատու մարմնի անվանումն ու տեղը և բողոքների ներկայացման ժամկետների մասին հստակ տեղեկությունները:

12) նշում այն մասին, որ տվյալ գնման գործընթացի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է այդ համաձայնագրով սահմանված շեմերը

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնման նպատակով 06.07.2020թ.-ին հայտարարված «TUR-12» ծածկագրով գնման Ընթացակարգի հրավերի մաս կազմող հայտերի ներկայացման հրավերով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել TUR-12, «Երևան-Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերականգնում» պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար: Նույն

Հրավերի 3-րդ կետով սահմանվել է, որ մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից» հունվար 2011թ., վերանայված հուլիս 2014թ. «Գնումների ուղեցույցներ»:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն ընթացակարգի մասով բողոքները ներկայացվում է համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների, որի արդյունքում, պետք է փաստել, որ տվյալ պարագայում, Ընկերության կողմից ներկայացված բողոքն ենթակա չէ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի քննությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սուարդի» ԲԸ-ի կողմից 03.12.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/119 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**